Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 6-րդ դասարան

Տարեկան թեմատիկ պլանավորում - 2018-2019 ուս. տարի – (68 ժամ, շաբաթական 2 դասաժամ)

Դասագիրք՝ Գ. Պետրոսյան, Լ. Գրիգորյան, Ա. Կարապետյան, Գ. Ալեքսանյան - *ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 6 - ԵՐԵՎԱՆ 2014*

Թեմա 1. Նյութերի փոխակերպումը - 12 ժամ (10+1 ժամ գործն. աշխ. և 1 ժամ ամփոփում)

Աշակերտներին ներկայացվող եռամակարդակ չափորոշչային պահանջներ

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
1	Ֆիզիկական և քիմիական երևույթներ: § 1.1. էջ 5 վարժ. 1,2 Դասն իրականացնել ՏՀՏ կաբինետում , կատարե՛լ փորձեր:	**Աշակերտը պետք է կարողանա** տարբերե՛լ ֆիզիկական և քիմիական երևույթները , իմանալ քիմիական փոխազդեցությունները:	**Կարողանա** ինքնուրույն սահմանե՛լ ֆիզիկական և քիմիական երևույթները ,տարբերակե՛լ դրանք և բերե՛լ օրինակներ:	**Կարողանա** փորձով դիտարկե՛լ ֆիզիկական և քիմիական փոխարկումները և **գրառե՛լ** արդյունքները:
2	Քիմիական ռեակցիաներ: § 1.2. Դրանց ընթանալու պայմաններ էջ 7 վարժ.1,2,3: Դասն իրական. ՏՀՏ կաբինետում:	**Կարողանա** տարբերե՛լ քիմիական ռեակցիաների ընթանալու բնութագրական որոշակի հատկանիշները:	**Իմանա** քիմիական ռեակցիաներին բնորոշ արտաքին նշանները՝ գույնի, հոտի , համի փոփոխությունները , գազի առաջաց.,ջերմության անջատ.:	**Կարողանա** ինքնուրույն կատարել եզրահանգումներ՝ փորձերի հետ կապված , և արդյունքները ձևակերպել տետրում :
3	Միացման և քայքայման ռեակ-	**Իմանա**, որ բնության մեջ տեղի են	**Կարողանա** իրականացնել մալաքիտի քայքայման և երկաթի ու ծծումբի	**Կարողանա** ինքնուրույն պատկերել պարզագույն ռեակցիաների

3	ցիաներ: § 1.3. էջ 11 վարժ. 2, 3 Դասն իրականացնել ՏՀՏ կաբի-նետում, կատարե՛լ փորձեր:	ունենում քայքայման և միացման ռեակցիաներ:Բերե՛լ օրինակներ:	միացման ռեակցիաները : **Ձևակեր-պել** դասի նոր հասկացությունները:	սխեմաներ, և ըստ այդ ռեակցիան. գրառումների տարբերել միացման և քայքայման ռեակցիաները:
4	Այրում: Հրդեհի հանգցնելը: § 1.4. էջ 13 վարժ. 3, 4	**Իմանա**, որ այրումը ջերմությամբ և լույսով ուղեկցվող քիմ. ռեակցիա է: **Գիտակցի** այրման օգտակարությունը և վնասակարությունը : **Իմանա** հրդեհը հանգցնելու միջոցների և հրդեհավտանգ նյութերի մասին:	**Իմանա** այրմանն անհրաժեշտ պայմանները՝թթվածնի ներկայությունն ու բոցավառման ջերմաստիճանը: Իմանա այրումը դադարեցնելու միջոցները(բրեզենտ,կրակմարիչ և այլ):	**Իմանա** թթվածնի օքսիդացնող հատկության մասին , դիտարկի այրումը,որպես նյութերի օքսիդացում:Կատարի ինքնուրույն եզրահանգումներ:
5	Վառելանյութեր:Վառելանութերի տեսակները: § 1.5. էջ 15,վ. 2,3	**Իմանա**, թե ո՞ր նյութերն են կոչվում վառելանյութեր, բերի օրինակներ:	**Կարողանա** տարբերակել վառելանյութերն՝ ըստ ագրեգատային վիճակների, և բերի օրինակներ:	**Գիտակցի,** ո՞ր վառելանյութերն են առավել նախընտրելի բնապահպանական տեսակետից:
6	Օքսիդներ: § 1.6. էջ 17 վարժ. 1, 2, 3	**Պատկերացում ունենա** օքսիդների բաղադրության մասին, կարողանա գրել մի քանի կարևորագույն օքսիդների բանաձևեր:	**Տարբերի** մետաղների և ոչ մետաղների օքսիդները : **Իմանա** դրանցից կարևորների կիրառումը:	**Իմանա** դասի նոր հասկացությունների մեջ զետաղված օքսիդների քիմիական բանաձևերն ու անվանումները (էջ 17):
7	Թթուներ: § 1.7. էջ 20 վարժ. 3, 4 Դասն իրականացնել ՏՀՏ կաբի-նետում , կատարե՛լ փորձեր:	**Իմանա** թթուների բաղադրությունը, սահմանումը , առօրյա կյանքում առավել շատ հանդիպող թթուների քիմիական բանաձևերն ու կիրառությունները : **Իմանա** ծծմբական թթուն ջրով նոսրացնելու եղանակը:	**Իմանա** թթուների հետ զգույշ վարվելու անհրաժեշտությունը:**Կարողանա** ճանաչել թթուները հայտանյութերի օգնությամբ(լակմուս,մեթիլ նարնջագույն և ֆենոլֆտալեին):**Իմանա** կենդանական և բուսական օրգանիզմնեռում գտնվող որոշ թթուների մասին:	**Իմանա** աղաթթվի,ծծմբական,ազոտական թթուների հատկություններն ու կիրառությունները,**ճանաչի** դրանց թթվային մնացորդները: **Ինքնուրույն կարողանա լրացնել** դասի վերջում բերված աղյուսակը (թեմա՝ Թթուներ , էջ 20):

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
8	Աղեր: § 1.8. էջ 22 վարժ. 3, 4	**Իմանա** աղերի բաղադրությունը, առօրյայում հանդիպող աղերը՝(կրաքար,սոդա,կերակրի աղ)և դրանց օգտագործման բնագավառները:	**Իմանա** աղերի կիրառումը, որպես պարարտանյութեր, լվացող նյութեր, նաև սննդի մեջ մեծ գործածություն ունեցող նյութեր:	**Կարողանա տարբերել** լվացքի և սննդի սոդաները,**գաղափար ունենա** նաև գիպսի մասին, որպես շինարարության և բժշկության մեջ օգտագործվող աղ:
9	Հիմքեր: § 1.9. էջ 24 վարժ. 1, 2	**Իմանա** հիմքերի բաղադրությունը, առօրյայում հանդիպող կարևորագույն հիմքերի բանաձևերը և հատկությունները($NaOH$, KOH, $Ca(OH)_2$):	**Կարևորի** հանգած կրի՝$Ca(OH)_2$ նշանակությունը շինարարության մեջ, **գաղափար կազմի** կրաջրի մասին: **Իմանա** կծու ալկալիների քայքայիչ հատկությունների մասին:	**Տարբերի** ջրում չլուծվող և լուծվող (ալկալիներ)հիմքերը:**Իմանա** հիմքերի ներկայությամբ հայտանյութերի գույնի փոփոխության մասին
10	Քիմիական նյութերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: § 1.10. էջ 27 վարժ. 1, 3, 4	**Գաղափար ունենա** շրջակա միջավայր արտանետվող թունավոր թափոնների ու արտանետումների և դրանց կործանարար ազդեցությունների մասին:	**Գիտակցի** թթվային անձրևների, թունաքիմիկատների, ծանր մետաղների շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությունները և բնապահպանության անհրաժեշտությունը:	**Իմանա** մթնոլորտ արտանետվող հիմնական թունավոր քիմիական նյութերը,դրանց վնասակարությունը, գիտակցի բնությանը հասցրած անուղղելի վնասը՝մարդկանցից:
11	**Գործնական աշխատանք N 1 <<Նյութերի փոխակերպումը>>**	**Իմանալ** թթուների և հիմքերի ճանաչումը հայտանյութերի օգնությամբ:	**Կարողանալ** կատարել փորձեր՝պահպանելով անվտանգության կանոն.:	**Կարողանալ** դիտարկե՛լ փորձի արդյունքները և **գրառե՛լ** տետրում
12	**Թեմայի ամփոփում**	**Ամրապնդել** գիտելիքները :	**Կազմել** թեմային առնչվող հարցեր, աղյուսակներ և գծապատկերներ:	**Հստակ ձևակերպել** բոլոր սահմանումները , նյութերի բանաձևերը:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 2. Մարմինների շարժումը և փոխազդեցությունը - 6 ժամ

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ան Բխմբ. ներկայացվ. պահանջն.)
13	Մեխանիկական շարժում,արագություն: § 2.1. էջ 32 խնդ. 1,2	**Ձևավորել** նախնական պատկերացումներ մեխանիկական շարժման և արագության մասին:**Կարողանա** բերել հավասարաչափ և անհավասարաչափ շարժման օրինակներ:	**Կարողանա որոշել** սեղանի մակերևույթով գլորվող գնդիկի արագությունը: Իմանա մարմնի միջին արագության որոշման բանաձևն ու չափման միավորները: (V= S/T)	Տարրական **պատկերացում ունենա** շարժման հարաբերականության մասին: **Կարողանա** , տրված ճանապարհով և ժամանակով, որոշել մարմնի արագությունը : Ինքնուրույն կազմի խնդիրներ:
14	Մարմինների փոխազդեցությունը: Ուժ: § 2.2. էջ 34 վարժ. 1,3	**Կարողանա** ուժաչափով չափել ուժը: **Կարողանա** բերել բնության ուժերի դրսևորման կոնկրետ օրինակներ:	**Գաղափար ունենա** մարմինների փոխազդեցության , ուժի՝ որպես մարմինների փոխազդեցությունը բնութագրող մեծության,մասին: **Կատարի եզրահանգումներ**,թե ինչի՞ց կարող է առաջանալ շարժումը:	**Կարողանա** աստիճանավորել ուժաչափը և նրանով **որոշել** մարմնի վրա ազդող ուժի մեծությունը: **Կարողանա** կատարել փորձեր, օր. երկու սայլակներով, որոնք միացած են ճկված թիթեղով:
15	Առաձգականության ուժ, ուժի չափումը: § 2.3. էջ 36 վարժ. 2, 3	**Կարողանա** ներմուծել ուժի գաղափարը : Իմանա ուժի չափման միավորը(Ն):**Գաղափար ունենա** մարմինների ձևափոխությունների մասին:	**Սահմանել** առաձգականության ուժը, **իմանալ** առաձգական և պլաստիկ ձևափոխությունների մասին: Կարողանա տարբերել դեֆորմացվող(առաձգական)մարմինները կամ ճկազանգվածները՝ չդեֆորմացվող մարմիններից:	**Իմանա** ուժի միավորը և **կարողանա սահմանել**, թե որ ուժին են անվանում մեկ նյուտոն ուժ:Ինքնուրույն բերի օրինակներ,թե ե՞րբ են առաջանում առաձգական ուժերը, և ինչի՞ց է կախված նրանց մեծությունը:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

16	Ծանրության ուժ և մարմնի կշիռ: Երկրի ձգողությունը: § 2.4. էջ 38 վարժ. 3,4	**Իմանա** ո՞րն է կոչվում տիեզերական ձգողություն,ծանրության ուժ:**Գաղափար** ունենա մարնինների ձևափոխությունների մասին:	**Կարողանա** որոշել տարբեր մարմինների կշիռները:Իմանա ծանրության ուժի ուղղությունը:**Հմադրի** ծանրության , առաձգականության և շփման ուժերի ուղղությունները : Ո՞ր դեպքում չի գործում ծանրության ուժը և ինչու::	**Կարողանա ներմուծել** ուժի գաղափարը,**իմանա**,ո՞ր դեպքում է մարմնի կշիռը հավասար լինում նրա վրա ազդող ծանրության ուժին:
17	Շփման ուժեր,շփումը բնության մեջ և կենցաղում: § 2.4. էջ 41 վարժ. 2,3,4 Դասն իրականացնել ՏՀՏ կաբինետում , կատարե՛լ փորձեր:	**Իմանա** ինչի՞պատճառով է առաջանում շփման ուժը: Քանի՞տեսակ են լինում շփման ուժերը,բերի օրինակներ շփման օգտակարության և վնասակարության վերաբերյալ:	**Իմանա՝** ինչն է արգելակում մարմնի շարժումը,որ դեպքերում են առաջանում սահքի , գլորման և դադարի շփումները,ինչու են յուղում մեքենաների շարժական մասերը : Ինչպե՞ս կարելի է փոքրացնել կամ մեծացնել սահքի և գլորման ուժերը : **Բերել** ինքնուրույն օրինակներ առօրյա կյանքից:	**Իմանա**, որ գլորման շփման ուժը փոքր է սահքի շփման ուժից, ցույց տալ, որ շփման ուժի մեծությունը կախված է սահող մարմն զանգվածից :Կրողանա բնութագրել դադարի շփման ուժը : **Իմանա** , թե ինչպե՞ս կարող է փոխարինել մի տեսակի շփման ուժը՝մյուսով (օր. սահքի շփման ուժը՝ գլորմանով):
18	Հեղուկներում և գազերում մարմինը դուրս հրող ուժը: § 2.4. էջ 44 վարժ. 1,3,4	**Իմանա** ո՞ր դեպում է մարմինը սուզվում հեղուկի մեջ,որ դեպքում լողում նրա մակերևույթին,կարողանա **օրինակներ բերել**,որոնք ցույց են տալիս, որ հեղուկներում և գազերում գտնվող մարմինների վրա ազդում է դեպի վեր ուղղված արտամղող ուժ:	**Իմանա** ինչից է կախված արքիմեդյան ուժի մեծությունը, **կարողանա** փորձով որոշել արքիմեդյան ուժի մեծությունը : **Իմանա,** որո՞նք են հեղուկի մեջ լողալու պայմանները:	**Իմանա** մարմնի լողալու պայմանները,ծանրության,շփման, առաձգականության ուժերի ուղղությունը: **Լուծել** արքիմեդյան ուժը որոշելու վերաբերյալ ոչ բարդ խնդիրներ: **Կարողանա** կատարել փորձեր և անել եզրահանգումներ:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 3. Էներգիա - 5 ժամ (3+1 ժամ ամփոփում և 1 ժամ թեմատիկ աշխ.)

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
19	Մեխանիկական աշխատանք և էներգիա: § 3.1. էջ 47 խնդ. 1	**Ձևավորի** նախնական պատկերացում աշխատանքի և էներգիայի մասին:**Հասկանա** մեխանիկական աշխատանքի իմաստը:	**Ձևակերպի** մեխանիկական աշխատանքի սահմանումը,բերի մեխանիկական աշխատանքի օրինակներ:	**Օգտագործել** մեխանիկական աշխատանքի բանաձևը, կատարել պարզագույն հաշվարկներ:**Իմանա** A=F. S 1Ջ = 1Ն . 1մ
20	Էներգիայի տեսակներ և փոխակերպումներ: § 3.2. էջ 50 վարժ. 2, 4, 6	**Գաղափար տա** էներգիայի տեսակների և էներգիայի մի տեսակից մի այլ տեսակի փոխակերպման մասին:	**Գաղափար ունենա** ջերմային, էլեկտրական, քիմիական,լույսային էներգիաների, դրանց փոխակերպում նեի մասին, բերի օրինակներ:	**Հասկանա և ձևակերպի** էներգիայի պահպանման օրենքը: **Կարողանա** կատարել փորձեր և անել եզրահանգումներ:
21	Էներգիան և կենդանի օրգանիզմները : § 3.3. էջ 52 վարժ. 2,3	**Իմանա** ինչու՞ է էներգիան անհրաժեշտ կենդանի օրգանիզմներին,ի՞նչ էներգիա են օգտագործում կենդանիները և ինչպես է առաջանում այն: Ինչի՞ վրա ենք ծախսում էներգիան:	**Իմանա** ինչի՞վրա են ծախսում կենդանի օրգանիզմները իրենց ստացած էներգիան,օրգանիզմում քիմիական էներգիան ինչպիսի՞ էներգիանեի է վերածվում:	**Կարողանա** ընդհանուր գծերով ներկայացնել լուսասինթեզի երևույթը: **Ինքնուրույն կարողանա եզրակացություններ անել,** օր.կենդանի օրգանիզմներում թթվածնի ի՞նչ նոր բացահայտումներ արեցի:
22	**Թեմայի ամփոփում**	**Ամրապնդել** գիտելիքները՝ անցած նյութի կրկնությամբ:	**Ամրապնդել** գիտելիքները՝ ֆրոնտալ հարցադրումներով:	**Հստակ ձևակերպել** բոլոր սահմանումները , լուծել խնդիրներ:
23	**Թեմատիկ աշխատանք N 1** **<Մարմ.-ի շարժ.-ը և փոխազդ.>**	Գրավոր աշխատանքը պետք է իր բովանդակությամբ և որակով համապատասխանի պետական կրթական չափորոշչային պահանջներին		

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 4. Ջերմային, էլեկտրական և մագնիսական երևույթներ - 9 ժամ (7+1 ժամ ամփոփ. և 1 ժամ կիսամյ. աշխ.)

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
24	Ջերմային հավասարակշռություն և ջերմաստիճան: § 4.1. էջ 56 վարժ. 1, 3, 5	**Կարողանա տարբերել** »տաք » և »սառը» մարմինները:**Իմանա,**ինչո՞վ են որոշում մարմնի տաք կամ սառը լինելը:**Չնակերպի** ջերմաստիճանի սահմանումը:	**Իմանա** ջերմաչափերի որոշ տեսակներ և դրանց կառուցվածքը,և թե ի՞նչ է ընկած սնդիկով կամ սպիրտով աշխատող ջերմաչափի հիմքում , կարողանա չափել ջերմաստիճանը:	**Կարողանա** տարբերել ջերմաստի ճանային սանդղակները՝ըստ Ցելսիուսի, Կելվինի, Ֆարենհայտի և այլն:**Իմանա** ջրի եռման և հալման ջերմաստիճանները:
25	Ջերմային երևույթների բազմազանությունը: § 4.2. էջ 59 վարժ. 5, 6, 7	**Իմանա** տաքացնելիս և սառեցնելիս մարմինների ծավալի փոփոխություն ների մասին : **Դիտարկի փորձեր** նշված երևույթների հետ կապված:	**Կարողանա** ինքնուրույն կատարել պինդ մարմնի ջերմային ընդարձակումը ցույց տվող փորձեր : Տալ հալում ,պնդացում և եռում երևույթների սահմանումները:	Սովորողը պետք է **իմանա** ջերմային երևույթների բազմազանությունը՝ տաքացում, սառեցում, հալում, բյուրեղացում, գոլորշացում,խտացում, եռում, և այլն:
26	Ջերմային էներգիայի աղբյուրները: § 4.3. էջ 61 վարժ. 1 , 3	**Իմանա,** որ ջերմությունը կյանքի անհրաժեշտ պայմաններից է , և ջերմության գլխավոր աղբյուրը **Արեգակն է:**	**Կարողանա** բերել ջերմային էներգիայի աղբյուրների օրինակներ: **Թվարկի** վառելանյութերի որոշ տեսակներ:	**Իմանա** մարմինների ջերմային ընդարձակման հաշվառումը տեխնիկայում, շինարարությունում և կենցաղում:
27	Մարմինների էլեկտրականացումը: § 4.4. էջ 63 վարժ. 1 , 2, 3	**Իմանա** տարբեր մարմինների էլեկտրականացման մասին, կարողանա փորձով ապացուցել:	**Իմանա** մարմինների էլեկտրականացման, եղանակների, երկու նշանի լիցքերի մասին:	Էլեկտրականացնել մարմինները տարբեր նշանի լիցքերով,**իմանա** տնային էլեկտրական սարքերից օգտվելու կանոնները:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

28	Էլեկտրական հոսանք: § 4.5. էջ 66 վարժ. 2, 3, 5	**Իմանա** , թե ի՞նչ է էլեկտրական հոսանքը , գիտենա էլեկտրական հոսանքից օգտվելու կանոնները:	**Գաղափար տալ** երկու տեսակի լիցքերի , էլեկտրական հոսանքի առաջացման և դրանից օգուտ կամ վնաս ստանալու մասին: **Իմանա** էլեկտրական հոսանքից օգտվելու անվտանգության կանոնները:	**Կարողանա** հավաքել էլեկտրական շղթա՝ պահպանելով անվտանգության կանոնները:
29	Կայծակ: § 4.6. էջ 68 վարժ. 3, 4 Դասն անցկացնել ՏՀՏ կաբինետում , իրականացնել վիրտուալ դասապրոցես:	**Իմանա** ,թե ինչի՞ց է առաջանում կայծակը , գաղափար կազմի ամպերի էլեկտրականացման և դրանց լիցքավորման ու լիցքաթափման մասին, և ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել կայծակից:	**Իմանա** ի՞նչ է շանթարգելը, ինչպե՞ս է այն շինությունները պաշտպանում կայծակի հարվածներից:Ի՞նչ դիրք պետք է ընդունենք բաց դաշտում կայծակից պաշտպանվելու համար:	**Իմանա** երկրի մակերևույթի վրա , ո՞ր առարկաներին է կայծակն առավել հաճախհարվածում:
30	Հաստատուն մագնիսներ: § 4.7. էջ 70 վարժ. 1, 3, 4	**Գաղափար ունենա** ,թե որո՞նք են կոչվում հաստատուն մագնիսներ, կամ պարզապես մագնիսներ: Տեսնի,շոշոփի մագնիսը:	**Կարողանա** գաղափար տալ հաստատուն մագնիսների և Երկրի մագնիսական դաշտի մասին: **Իմանա** , ո՞ր երևույթն է կոչվում ապամագնիսացում : **Կարողանա** օգտվել կողմնացույցից:	**Իմանա** Երկրի մագնիսական դաշտի մագնիսական բևեռների կաղմնացույցի կառուցվածքի մասին: **Կարողանա** ինքնուրույն Երկրի մագնիսական բևեռները որոշել:
31	**Թեմայի ամփոփում**	**Ամրապնդել** գիտելիքները՝ անցած նյութի կրկնությամբ:	**Ամրապնդել** գիտելիքները՝ ֆրոնտալ հարցադրումներով:	**Հստակ ձևակերպել** բոլոր սահմանումները , լուծել խնդիրներ:
32	**ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԻՉ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ - I կիսամյակ** *Կիսամյակային աշխատանքը պետք է իր բովանդակությամբ , որակով և նախատեսված ժամանակով համապատասխանի պետական կրթական չափորոշչային պահանջներին և կազմվի՝հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու հմտությունները:*			

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 5. Լուսային և ձայնային երևույթներ - 9 ժամ (7+1 ժամ ամփոփ. և 1 ժամ թեմատիկ աշխ.)

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
33	Լույսի աղբյուրներ, լույսի ուղղագիծ տարածումը: Արեգակի և Լուսնի խավարումները: § 5.1. էջ 75 վարժ. 2, 3, 4	**Ճանաչի** լույսի բնական և արհեստական աղբյուրները, բերի օրինակներ: **Ծանոթ լինի** Արեգակի և Լուսնի խավարումներին:	**Պատկերացում կազմի** լույսի ուղղագիծ տարածման, անդրադարձման և բեկման երևույթների մասին: **Բացատրի** Լուսնի լրիվ և մասնակի խավարումների պատճառը:	**Կարողանա պատկերել** Արեգակի և Լուսնի խավարումների գծապատկերները:
34	Լույսի անդրադարձումը: Հայելիներ: § 5.2. էջ 77 վարժ. 1, 2,	**Պատկերացում ձևավորի** լույսի աղբյուրների , լույսի անդրադարձման և բեկման երևույթների մասին:**Իմանա** քանի՞ տեսակ են լինում հայելիները:	**Իմանա,** թե ի՞նչ օրենքով է կատարվում լույսի անդրադարձումը:Առարկայի ինչպիսի՞ պատկեր է առաջանում հարթ հայելիում:	**Իմանա** , որո՞նք են կոչվում **անկ - ման** անկյուն և **անդրանարձման** անկյուն , և ինչի՞ են հավասար դրանք:
35	Լույսի բեկումը, ոսպնյակներ: § 5.3. էջ 79 վարժ. 1, 3	**Պատկերացում կազմի** լույսի բեկման մասին, **իմանա** որո՞նք են օդատեսիլները:	**Իմանա,** ո՞րն է կոչվում ոսպնյակի *կիզակետ:* Քանի՞ տեսակ են լինում ոսպնյակները,որո՞նք են հավաքող և որո՞նք ցրող ոսպնյակները:	**Իմանա** խիտ և նոսր միջավայրերում լույսի բեկման անկյան և անկման անկյան մեծությունների մասին:
36	Աչք և տեսողություն: Տեսողության հիգիենա: § 5.4. էջ 82 վարժ. 3, 4	**Գաղափար ունենա** աչքի կառուցվածքի մասին:**Իմանա** տեսողությունը վնասող վատ սովորությունների մասին , **իմանա** նաև տեսողության հիգիենան:	**Կարողանա** օրինակներ բերել , որոնք հաստատում են լույսի ուղղագիծ տարածման և բեկման երևույթները:	**Իմանա** ինչպե՞ս են բացատրվում աչքի կարճատեսությունը և հեռատեսությունը և ինչպես են դրանք կանխարգելում կամ ուղղում:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

37	Լույսը և գույնը բնության մեջ: Ծիածան: § 5.5. էջ 85 վարժ. 1, 3, 4 Դասն անցկացնել ՏՀՏ կաբի-նետում , դիտե սլայդեր:	**Կարողանա** լուսաբանել լույսի կարե-վոր դերը կենդանի օրգանիզմների կենսագործունեության համար: **Իմանա** ինչով են պայմանավորված մեզ շրջապատող առարկաների գույները, **իմանա** ինչ է ծիածանը:	**Կարողանա** պատկերացում ձևավո-րել ծիածանի առաջացման մասին: **Տարբերակի** Արեգակի լույսային սպեկտորի գույները : **Գաղափար ունենա** ,թե ինչո՞վ են պայմանավոր-ված թափանցիկ և սև մարմինների գույները:	**Կարողանա բացատրել,** թե ինչու՞ է պրիզմայում կամ ջրի կաթիլում սպիտակ լույսը բաժանվում առան ձին գունավոր ճառագայթների: **Գաղափար ունենա** արհեստական ծիածանի ստացման մասին:
38	Ձայնի աղբյուրներ, ձայնի տա-րածումն ու անդրադարձումը: § 5.6. էջ 88 վարժ. 1, 2, 3	**Իմանա** մեր շրջապատում տեղի ունեցող ձայնային երևույթների, երաժշտական ձայների և աղմուկի մասին:**Իմանա** ձայնի հաճախության միավորը:	**Իմանա** ,ո՞ր տատանումներն են կոչ-վում լսելի (ակուստիկ) տատանում-ներ: Ի՞նչ հաճախականությամբ տա-տանումների առաջացրած ձայնն է կոչվում ինֆրաձայն , ուլտրաձայն:	**Կարողանա** բացատրել ձայնի առաջացման և տարբեր միջա-վայրերում նրա տարածման արագության մասին:
39	Ձայնի ընկալումը: Լսողության հիգիենա: § 5.7. էջ 91 վարժ. 2, 3	**Պատկերացում կազմի** , թե ի՞նչ կառուցվածք ունի մարդու ականջը: **Իմանա և կարողանա** խուսափել լսողության վատ ազդող և լսողությու նը վնասող երևույթներից:	**Իմանա** ի՞նչ է աղմուկը և ի՞նչ ազդե-ցություն է թողնում այն կենդանի օր-գանիզմների վրա : **Պատկերացում ձևավորի** մեր շրջապատում տեղի ունեցող ձայնային երևույթների մա-սին, իմանա լսողական հիգիենայի կանոնները:	**Իմանա** ի՞նչ է կամերտոնը, ինչի՞ համար է այն նախատեսված: **Կարողանա նկարագրել** մարդու կողմից ձայնի ընկալման ընթաց-քը:
40	**Թեմայի ամփոփում**	**Ամրապնդել** գիտելիքները՝ անցած նյութի կրկնությամբ:	**Ամրապնդել** գիտելիքները՝ ֆրոնտալ հարցադրումներով:	**Հստակ ձևակերպել** բոլոր սահմա-նումները , լուծել խնդիրներ:
41	**Թեմատիկ աշխատանք N 2 <<Լույսային և ձայնային երևույթներ>>**	Գրավոր աշխատանքը կազմել՝ հաշվի առնելով աշակերտների ընդունակություններն ու կարողությունները , պահպանելով՝ կրթական չափորոշչային պահանջները:		

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 6. Կենդանի օրգանիզմների կառուցվածքը և հատկությ.-ը - 9 ժամ (7+1 ժամ ամփոփ. և 1 ժամ գործ. աշխ.)

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
42	Բջիջ : Բջջի քիմիական բաղադրությունը: § 6.1. էջ 95 վարժ. 1, 2, 3	**Պատկերացում կազմի** ,թե ի՞նչ է բջիջը:Ինչպիսի՞ քիմիական տարրերից է այն կազմված:	**Կարողանա** թվարկել բջջի քիմիական բաղադրամասերը : **Թվարկի** բջջի հիմնական քիմիական նյութերը:	**Կարողանա** հիմնավորել բոլոր կենդանի օրգանիզմների բջջային կառուցվածք և միևնույն քիմիական տարրեր ունենալը:
43	Բջջի կառուցվածքը: § 6.2. էջ 97 վարժ. 1, 2	**Գաղափար ունենա** բջջի կառուցվածքի և ֆունկցիաների մասին: **Իմանա** բջջի հիմանակն օրգանոիդ - ների անվանումները:	**Կարողանա կազմել** կենդանի օրգանիզմներում քիմիական տարրերի տարածման աղյուսակներ և դիագրամմաներ:**Իմանա** բջջի օրգանոիդների կառուցվ.-ն ու ֆունկց.-ները:	**Տարբերի** բուսական և կենդանակա ն բջիջները , թվարկի դրանց օրգանոիդային նմանություններն ու տարբերությունները:
44	Հյուսվածքներ: § 6.3. էջ 99 վարժ. 4, 5, 6	**Կարողանա** թվարկել բուսական հյուսվածքները:	**Իմանա** բուսական հյուսվածքների կառուցվածքներն ու ֆունկցիաները:	**Կազմել** բուսական բջիջների և հյուսվածքների գծապատկերներ:
45	**Գործնական աշխատանք N2 <Բուսական բջիջների և հյուսվ. դիտումը մանրադիտակով >>** Դասն անցկացնել կենսաբ.լաբորատորիայում , կիրառել մանրադիտակներ,դիտել սոխի կամ խնձորի պատրաստուկներ:§6.4.	**Կարողանա** օգտվել մանրադիտակից և դիտել սոխի մանրապատրաստուկը: **Կարողանա** , որոշ չափով, կատարել դիտարկումներ և գրանցել իր դիտարկումները լաբորատոր տետրում:	**Կարողանա** օգտվել առարկայական ապակիներից և ծածկապակիներից, նկարի մանրադիտակով դիտած պատկերները՝ արտացոլոլով բջջա - թաղանթը, ցիտոպլազման , կորիզը:	**Ինքնուրույն պատրաստի** սոխի կամ խնձորի պատրաստուկներ՝ հետևելով ուսուցչի խորհուրդներին:**Կարողանա կատարել** ինքնուրույն եզրակացություններ:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

46	Ծաղկավոր բույսերի օրգաններ-ը: Արմատ: § 6.5. էջ 104 վարժ. 4, 5	**Գաղափար ունենա** բույսի վեգետա-տիվ և գեներատիվ օրգանների,ար-մատների տեսակների և կառուցված քի մասին:	**Կարողանա տարբերակել** գլխավոր, հավելյալ և կողքային արմատները: **Ինքնուրույն բերի** նշված տիպի ար-մատների օրինակներ:	**Նկարագրի** արմատի գոտիները, **բացատրի** նրանց կառուցվածքն ու կատարած ֆունկցիան:
47	Ընձյուղի կառուցվածքը և նշանակությունը: § 6.6. էջ 106 վարժ. 1, 3	**Իմանա** ինչի՞ց է կազմված ընձյուղը: Կարողանա տարբերել տերևների տեսակները:	**Գաղափար ունենա** տերևի հիմնա - կան գործառույթների՝ օրգանական նյութերի սինթեզի և ջրի գոլորշիաց-ման մասին:	**Պատկերացում կազմի** տերևների ձևափոխությունների, դրանց կա-տարած գործառույթների մասին, ներկայացնի օրինակներ: **Նկարա-գրի** ցողունի փոխադրող,հենարա-նային,պաշարող գործառույթները:
48	Բույսի վեգետատիվ օրգաննե - ը:Ծաղիկ, պտուղ, սերմ: § 6.7. էջ 109 վարժ. 3, 5, 6	**Ընդհանուր գաղափար ունենա** ծաղ-կի կառուցվածքի,ծաղկի անդամների մասին:**Կարողանա տարբերել** չոր և հյութալի պտուղները, բերի օրինակ-ներ:	**Ընդհանուր գաղափար ունենա** ծաղ-կի կառուցվածքի,ծաղկի անդամների մասին:**Կարողանա տարբերել** չոր և հյութալի պտուղները, բերի օրինակ-ներ:	**Իմանա** , թե ինչի՞ց է առաջանում սերմը , ինչի՞ց է այն կազմված: Ինչու՞ են վարսանդը և առէջները համարվում բույսի գլխավոր մասե ը:
49	Օրգանիզմն ամբողջական համակարգ է: § 6.8. էջ 111 վարժ. 1, 2	**Գաղափար ունենա** <<հյուսվածք>>, <<օրգան>>,<<օրգանների համակար-գեր>> հասկացությունների մասին:	**Կարողանա բացատրել** կենդանի օր-գանիզմներին բնորոշ հատկանիշնե-ը , բերել օրինակներ : **Գաղափար ունենա**,թե ինչ՞տեղի կունենա բույսի հետ, եթե վնասատար միջատները ոչնչացնեն բոլոր տերևները:	**Կարողանա հիմնավորել** օրգանի կառուցվածքի և նրա կատարած գործառույթի միջև եղած կապը: **Կարողանա ներկայացնել** օրգա-նիզմը որպես ամբողջական համա կարգ:
50	**Թեմայի ամփոփում**	**Ամրապնդել** գիտելիքները՝ անցած նյութի կրկնությամբ:	**Ամրապնդել** գիտելիքները՝ խաչաձև հարցադրումներով:	**Հստակ ձևակերպել** բոլոր սահմա-նումները:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 7. Օրգանիզմների կենսագործունեությունը - 9 ժամ (8 + 1 ժամ գործ. աշխ.)

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ա և Բ խմբ. ներկայացվ. պահանջն.)
51	Սննդառություն և մարսողությ.: § 7.1. էջ 115 վարժ. 1, 2	**Իմանա** բույսերի և կենդանիների սնման տարբեր եղանակները:**Գաղափար ունենա** կենդանիների սնման տարբեր եղանակների մասին, **կարողանա** բերել օրինակներ:	**Գաղափար ունենա** տերևի քլորոպլաստների կառուցվածքի և կատարած ֆունկցիաների մասին: **Հակիրճ բնութագրի** ֆոտոսինթեզ : Հետերոտրոֆներից առանձնացնի դիակեր և մակաբույծ օրգանիզմներին:	**Կարողանա** բացատր. ավտոտրոֆ և հետերոտրոֆ սնման եղանակների միջև եղած տարբերությունները:**Կարողանա** հիմնավորել բույսերի **օդային սնուցման նշանակությունը:**
52	Շնչառություն: § 7.2. էջ 118 վարժ. 2, 3	**Կարողանա թվարկել** տարբեր կենդանիների շնչառության օրգանները: **Գաղափար ունենա** բույսերի և կենդանիների շնչառության ժամանակ թթվածնի կարևոր դերի մասին:	**Կարողանա** բացատրել շնչառության նշանակությունը և թթվածնի կարևոր դերը այդ գործընթացում:	**Կարողանա** հիմնավորել բուսական և կենդանական օրգանիզմներում իրականացվող շնչառության միասնական բնույթը:
53	Նյութերի տեղափոխումն օրգանիզմում: § 7.3. էջ 121 վարժ. 1, 2, 3	**Գաղափար ունենա** բույսերի և կենդանիների օրգ. նյութերի փոխադրմ. մասին: **Կարողանա** թվարկել բույսերի փոխադրող հյուսվածքի տեսակները: Իմանա արյան գործառույթը:	**Իմանա** կենդանի օրգանիզմներում՝ թե՛ բուսական, և թե՛ կենդանական նյութերի փոխադրման ուղիները:	**Կարողանա** հետևություն անել օրգանիզմում նյութերի փոխադրման նշանակության մասին:
54	**Գործն. աշխ.- Ջրի և հանքային նյութերի շարժումը ցողունով:**	**Կարողանա կատարել** ուսուցչի ներկայացրած փորձը՝ ծաղիկների գունավորումը՝ թանաքաջրով:	**Ունենալով անհրաժեշտ** նյութեր և սարքավորումներ՝ կատարել հավելյալ արմատների առաջացմ. փորձը:	**Կատարված փորձերից անել ինքնուրույն եզրակացություններ:**

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

55	Արտազատություն: § 7.4. էջ 125 վարժ. 2, 4	**Իմանա** բույսերի և կենդանիների արտազատության առանձնահատկությունների մասին:	**Կարողանա** բացատրել արտազատության նշանակությունը կենդանի օրգանիզմների համար:	**Ներկայացնի** տարբեր դասերին պատկանող կենդանիների արտազատության օրգանները:
56	Նյութերի և էներգիայի փոխանակություն: § 7.5. էջ 127 վարժ. 3, 4	**Գաղափար ունենա** կենդանի օրգանիզմի և շրջակա միջավայրի միջև տեղի ունեցող նյութերի և էներգիայի փոխանակության , սառնարյուն և տաքարյուն կենդանիների մասին:	**Կարողանա** բացատրել նյութերի փոխանակությունը կենդանի օրգանիզմում,կենդանիների սառնարյունության և տաքարյունության պատճառները: **Կարողանա** բերել օրինակներ:	**Կարողանա** կենդանի օրգանիզմը դիտել որպես բաց համակարգ և հիմնավորել, որ նյութերի փոխանակությունը հանդիսանում է կենդանիօրգ.հիմնական հատկանիշը:
57	Բազմացում:Անսեռ բազմացում: § 7.6. էջ 130 վարժ. 3, 4	**Գաղափար ունենա** բույսերի և կենդանիների անսեռ և սեռական բազմացման մասին , **իմանա** բույսերի անսեռ բազմացման եղանակները (բազմացում սպորներով և բույսի այլ վեգետատիվ մասերով) :	**Կարողանա** բացատրել անսեռ և սեռական բազմացումը: իմանա երկսեռ (հերմաֆրոդիտ) և բաժանասեռ օրգանիզմների մասին :	**Կարողանա** հետևություններ անել անսեռ և սեռական բազմացումների միջև եղած տարբերությունների մասին :
58	Սեռական բազմացում: § 7.7. էջ 132 վարժ. 3, 4	**Իմանա** սեռական բազմացման ժամանակ առաջացող մասնագիտացված սեռական բջիջների՝ գամետների մասին:	**Գաղափար ունենա** սպերմատազոիդի և ձվաբջջի միաձուլման՝ բեղմնավորման մասին: **Իմանա** երկսեռ ծաղիկների և հերմաֆրոդիտ կենդանիների մասին:	**Կարողանա բացատրել,** թե ի՞նչ է տեղի ունենում ծաղկավոր բույսերի բեղմնավորումից հետո:**Բացատրի** ի՞նչ է փոշոտումը: Ի՞նչ է կուսածնությունը,ո՞ր օրգանիզմներն են կուսածին, բերի օրինակներ:
59	Բույսերի աճը և զարգացումը: § 7.8. էջ 135 վարժ. 3, 4	**Գաղափար ունենա** բույսերի աճի ու զարգացման մասին: **Իմանա** սերմի կառուցվածքը, ինչի հաշվին է տեղի ունենում սերմի ծլումը , սերմերի տարածման եղանակները:	**Կարողանա** բացատրել սերմի ծլման համար անհրաժեշտ պայմանները՝ խոնավություն , օդ և որոշակի ջերմություն : **Իմանա** պտուղների և սերմերի տարածման եղանակները :	**Կարողանա** հիմնավորել բույսերի համար սերմերի և պտուղների տարածման անհրաժեշտ.-ը : **Գաղափար ունենա** սաղմ, ծիլ, սաղմնային արմատիկ, ցողունիկի մասին:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

Թեմա 8. Օրգանիզմ և միջավայր - 3 ժամ

N	Ուսուցանվող դասանյութ Դասի թեման, պարագրաֆը, էջը , տնային աշխատանքը	Ա մակարդակ *նվազագույն* պահանջներ	Բ մակարդակ *միջին* մակարդակ (ավելանում են Ա խմբին ներկայացվող պահանջն.)	Գ մակարդակ *բարձր* մակարդակ(ավելանում են Ան Բխմբ. ներկայացվ. պահանջն.)
60	Կենդանի օրգանիզմների կենսամիջավայրեր: § 8.1. էջ 139 վարժ. 1, 3, 4	**Գաղափար** ունենա կենդանի օրգա - նիզմների հիմնական կենսամիջա- վայրերի մասին (ջրային , հողային, օդացամաքային , օրգանիզմային):	**Կարողանա**բացատրել տարբեր կեն- սամիջավայրերում բնակվող կենդա- նի օրգանիզմների առանձնահատ- կությունները և հարմարվածությու- նը կենսամիջավայրին :	**Գաղափար ունենա** էկոլոգիական գործոնների մասին:
61	Շրջակա միջավայրի գործոնները: § 8.2. էջ 142 վարժ. 1, 2, 4	**Իմանա** էկոլոգիական գործոնները կարողանա թվարկել նրանց հիմնա- կան խմբերը(ոչ կենսածին,կենսածին և մարդածին) և բերել օրինակներ:	**Իմանա** գործոնների անուղղակի և ուղղակի ազդեցության մասին:Իմա - նա մարդածին գործոնների ինչպես դրական , այնպես էլ բացասական ազդեցությունների մասին:	**Կարողանա բացատրել** կենդանի օրգանիզմների հարմարվածությ- ունը էկոլոգիական գործոններին: Ինքնուրույն կարողանա բերել օրինակներ:
62	Բնական համակեցությունները և դրանց պահպանումը: § 8.3. էջ 145 վարժ. 1, 3	**Կարողանա** բացատրել <<բնական համակեցություն >> , << սննդային շղթա>> հասկացությունները և բերել օրինակներ: **Ինքնուրույն ներկայաց- նել** համակեցություններում օրգա- նիզմների երեք խմբերը(արտադրող- ներին,սպառողներին,քայքայողներ.):	**Կարողանա** բացահայտել համակե - ցություններում գործող անտեսանե- լի կապերը և ներկայացնել սննդային շղթան որպես նյութերի և էներգիայի փոխանցման միջոց:	**Կարողանա եզրահանգումներ կատարել** բնական համակեցու- թյունների պահպանման և վերա- կանգման կարևորության մասին: **Ինքնուրույն կազմել** 3-4-5 օղակ- ներից կազմված սնման շղթաներ:

Թեմա 9. Մարդու առողջությունը - 6 ժամ (4 + 1 ժամ թեմայի ամփ. և 1 ժամ կիսամյակային ամփ. գրավ. աշխ.)

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մարիա Գևորգյան

63	Մարդու առողջությունը: Գաղափար առողջության մասին: § 9.1. էջ 147 վարժ. 1, 2	**Կարևորի** առողջության առաջնային և հսկայական դերը մարդու ու կենդանիների կյանքում:	**Կարողանա** հիմնավորել առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը, **իմանա** վարակիչ հիվանդությունների կանխարգելմ.անհրաժեշտությ.-ը:	**Կարողանա պատկերացում կազմել** առողջության պահպանման կարևորության և այլ բացարձակ արժեքների մասին:
64	Հիվանդություններ: Դրանց տեսակները: § 9.2. էջ 151 վարժ. 1, 3, 4	**Գաղափար ունենա** մարդու մոտ առավել հաճախ հանդիպող հիվանդությունների մասին, իմանա դրանցից խուսափելու եղանակները:	**Պատկերացում ունենա** կոտրվածքների, պրկումների մասին, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, դրանց տարածման մասին:	**Պատկերացում կազմի** սիրտ-անոթային հիվանդությունների, նորագոյացությունների, հոգեկան հիվանդությունների մասին:
65	Առողջ ապրելակերպի կանոնները: § 9.3. էջ 154 վարժ. 1, 2, 3	**Իմանա** և առօրյա կյանքում **կարողանա** օգտագործել առողջ ապրելակերպի կանոները:	**Կարևորի** սպորտի և առողջ սննդակարգի որոշիչ դերը առողջ օրգանիզմ ունենալու մեջ:	**Հետևի** սեփական առողջության պահպանմանը,աշխատանքի և հանգստի ճիշտ կազմակերպմանը
66	Վնասակար սովորություններ: Դրանց հետևանքները: § 9.4. էջ 157 վարժ. 1, 3	**Իմանա** վնասակար սովորությունների, դրանց հետևանքների, ֆիզիկական և մտավոր գերհոգնածության առաջացման մասին:	**Կարողանա** բացատրել օրգանիզմի վրա վնասակար սովորությունների թողած հետևանքները: **Կարևորի** հանգստի և մարզումների դերը:	**Իմանա** գերհոգնածությունը կանխելու պատճառահետևանքային կապերը **Կարողանա** խուսափել դրանցից:
67	**Թեմայի ամփոփում**	**Ամրապնդել** գիտելիքները՝ անցած նյութի կրկնությամբ:	**Ամրապնդել** գիտելիքները՝ խաչաձև հարցադրումներով:	**Հստակ ձևակերպել** բոլոր սահմանումները:
68	**ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԻՉ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ - II կիսամյակ** *Կիսամյակային աշխատանքը պետք է իր բովանդակությամբ, որակով և նախատեսված ժամանակով համապատասխանի պետական կրթական չափորոշչային պահանջներին և կազմվի՝հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու հմտությունները:*			